

2049

24

G-98

1989

2010

24

5-98

Գ Ի Ր Ք

ԱՂՋԹԻՑ

ԱՍԱՅԵԼ, ԱՐՅՈՎՆ ԵՓՐԵՄԻ ԽՈՒԲԻՆ
Ա.ԱՐԻԱՅ:

ՏՊՈԳԻԵԼ, ԱՐԴՅՈՒԹՅՎ ԵԳԵԱԾԻՈՒ Վ.ԱՐԴՅՈՒԹՅՎ
Ա.ԱՐ.ԶԵՐԱ ՄԻԱՅԻՆԻ ԱԵԽՈՅՈՅ Վ.ԱՐ.ԶԵՐԱ

ՎԱՐԱՐԱՊԱՏ

Ի ՏՊԵՐԵՆԻ ՄՐՅԱ ԿԵԹՈՒՊՐԻԿԻ ԷՀՄԻԾԵՄԻՆԻ

ԱՅԼՈՒ—1889

24
Ե-98

24
Ե-98

Գ Ի Բ Ք

ԱՂՋԹԻՑ



ԱՍԱՑԵԱԼ ՍՐԲՈՅՆ ԵՓՐԵՄԻ ԽՈՒՐԻՆ
ԱՍՈՐԻՈՅ:

ՏՊԱԳՐԵԱԼ ԱՐԴԵԱՄԲԲՔ ԻԳՆԱՏԻՈՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ԱՅՎԱՉԵԱՆ ՄԻԱԲԱՆԻ ՍԵՒԱՆԱՑ ՎԱՆԻՑ:

ՎԱՀԱՐԵԱՊԱՏ

Ի ՑՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ Էջմիածնի

ՌՅԼԸ—1889

(2)

17690



3490.00

ՀՐԱՄԱՆԸ

ՏԵԱԹԻ ՏԵԱԹԻ ՄԱԿԱՐԱՑ

ՎԵՀԱՓԱՆԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՒՂԴԿՈՍԻ ԱՄԵՆԱՅԵՆ ՀԱՅՈՑ.

2001

ՀԱՅՈՑ



1664-54

ՅՈՐԴՈՐԱԿ

ԵՊԵԾԽԵՐՈՒԹԵԱՆ

ԱՐՔՈՅՆՆԵՐԵՄԻ ԽՈՌԵՐԻՆ ԱՍՈՐԵՄ:



1 Ասէ երանհի մարգարէն Եղեկէլ. անօրէնն եթէ դարձցի յանօրէնութեանց իւրոց զոր արար, և արասցէ արդարութիւն և ողորմութիւն, կելով կեցցէ՝ և մի մեռցի։ Ամենայն յանցանք իւր զոր յանցեալ իցէ, և անօրէնութիւնք իւր զոր անօրինեալ իցէ, մի յիշեսցին. այլ ողորմութեամբ իւրով զոր արար. կեցցէ։
Վասն որոյ զբազմօք զանց արարեալ

փութասցուք հասանել յլնչաւէտ հօր
առատ որդին. որոյ անունն կեանք է և
լոյս և փրկիչ. յոր հաւատացաք՝ յոր մը-
կրտեցաք և լուսաւորեցաք: Որ ի հօրէ
առնու, և զիւրսն զգեցուցանէ. զփառ-
որն զոր ետուր ինձ, ետու նոցա: Որ
զձեռանէ կալեալ զիւրոց, առ հայր մնւ-
ծանէ. կամիմ զի ուր ես իցեմ, և սո-
քա ընդիս իցեն: Որ լանջակից և գըր-
կախառն հօր կացուցանէ. զի որպէս
գու յիս և ես ի քեզ և սոքա ընդիս
և ընդ քեզ ի մէջ իցեն: Ով սքանչել-
եցն. ով երջանիկ աւետեացն. ով ան-
չափ մարդասիրութեանն:

Մատթէոս՝ երեկ մաքուաւոր կողոպ-
տիչ անողորմ, այսօր ելեալ յերկինս
բազմի: Պետքոս ուրացող քրիստոսի,
այսօր գահ ի վեր անցեալ՝ փառօք փա-
ռաւորի: Պօղոս՝ հայհոյիչ և հալածիչ
եկեղեցւոյ, այսօր յանձառելիսն մը-

տեալ՝ առ աստուած հանգչի: Ընդէ՞ր ա-
նագանիմք, արիք փութասցուք առ այն-
պիսի ողորմած տէրն. մի յապազեսցուք,
մի հեղգասցուք: Եթէ զբազում աշ-
խարհօք և զգաւառօք պիտոյ էր անցա-
նել, առաւել փութալի էր երագեալ
անկանել առաջի նորա գթութեանն և
անչափ մնարդասիրութեան:

2 Այլ նորա ծանուցեալ զհեղ-
գութիւնս մեր՝ և զանփութալի ծու-
լութիւնս, առ գուրս եկեալ՝ առ սեամն
մատուցեալ, ձայնէ առ մեզ՝ և կոչէ
ուժգին. եկայք առիս ամենայն վաստա-
կեալք և բեռնաւորք, և ես հանգուցից
զձեզ. վարանեալքդ և ձանձրացեալքդ
գութիք հանգիստ անձանց ձերոց. զի
լուծ իմ քաղցր է, և բեռն իմ փոքրո-
գի: Ոչ եմ պահանջող, ոչ կշտամբիչ,
ոչ յանդիմանիչ. միայն զլեզուդ շար-

ժեա և խոստովանեա զոր գործեցելը՝
բեռն իմ փոքրոգի էթեթեւ, անաշխատ,
զոր եթէ կամիցիս՝ դիւրաւ տանիցիս։
Խսկ դու ընդէ՞ր տարակուսիս և դան-
դաղիս և վախվախես, որպէս թէ ի մե-
ծամեծ տանջանս ես մոտանել, և կամ
ի նեղութիւնս և ի վտանգս, և ոչ դաս
յուղղութիւն։

Դարձեալ՝ նայեցեալ ի տկարութիւնս
մեր՝ զամենապետութիւն իւրցուցանէ՝
և հարցանէ. զինչ կամիս, ում բաղ-
ձաս. հիւանդ ես, ճարտար բժիշկ եմ
ես. ոչ է պիտոյ բժիշկ ողջոց՝ այլ հի-
ւանդաց. ձրի բժշկեմ, չպահանջեմ
ինչ ի քէն՝ բայց միայն զդեղն։ Ոչ առ
վաճառականս առաքեմ, ոչ ինչս ծա-
խել, ոչ յայլմէ աղերսել. մօւտ ի սեն-
եակ սրտի քոյ, բեր ինձ արտասուս որ-
չափ և ձեռնհաս իցես. եթէ մի կաթ-
իցէ՝ բաւական է մկրտել զքեղ երկրորդ

անդամ, և յառաջին փառմն հառու-
ցանել. եթէ մեղաւոր ես, ողորմած եմ
ես. ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղա-
ւորս յապաշխարութիւն։ Որք առիս
դարձան՝ ոչ ամաչեցին. և ոչ ոք ի նո-
ցանէ կորեաւ՝ բայց միայն թիւրեալքն
ի ճշմարտութենէ։

Զմաքսաւորն միով բանիւ արդարա-
ցուցի. զպունիկն իւրով արտասուօքն
որբեցի, զբժշկութիւնն և զողորմու-
թիւնն պարզեցի ամենեցուն։ Պետ-
րոսի՝ ուրացողին զիս երիցս անդամ,
դառնապէս արտասուացն ողորմեցոյ,
առիս կոչեցի՝ և ի կարգի առաքելու-
թեան պահեցի։ Զիս ձաղանօք ի խաչին
դատապարտեցին. արարածք ողբային և
սարսէին. ես վասն իմաշահանողացն ա-
ղօթս առնէի, նոքա բարկութեամբ և
սրտամոռութեամբ զգլուխս իւրեանց
շարժէին. ես քաղցրութեամբ և ողոր-

մութեամբ թողութիւն խոստանայի: Եւ-
ապա զի՞նչ կատարումն. զամենայն հե-
թանոսս ողորմութեամբ կոչեցի յորդէ-
գրութիւն. ածի զօտարոտի ոչխարսն ի
գաւիթ սրբութեան իմոյ. և եղեւ մի
հօտ և մի հովիւ. ես նոյն եմ և ոչ փո-
փոխիմ, երեկ և այսօր, նոյն և յաւի-
տեան:

3 **Պ**արաւի ես՝ մի գանդաղիր, ես
եմ աղբիւրն կենաց քաղցրաբուղիս և
անուշաճաշակ. եթէ ոք ծարաւի իցէ՝ ե-
կեսցէ առիս և արբցէ՝ մի ծարաւես-
ցի յաւիտեան. այլև գետք յորովայնէ
նորա բղիւեսցեն ջրոց կենդանութեան:
Քաղցեալ ես՝ մի լքանիր, ես եմ հացն
կենաց ի յերկնից իջեալ. եթէ ոք ուտի-
ցէ ի հացէս յայսմանէ՝ կեցցէ յաւիտ-
եան:

Մերկացար՝ ով մեղաւոր, ես եմ պատ-

մուճան քեզ և վերարկու. միայն ի չա-
րեացդ հեռացիր, և ես ագուցից քեզ
զառաջին հանդերձն. զի որը ի քրիս-
տոս մկրտեցարուք՝ զքրիստոս զգեցեալ
էք: Եթէ կարօտացար կօշկաց, ես զգե-
ցուցից քեզ կօշկիս լաւագոյնս, որով
կոխեսցես զօձս և զկարիճն՝ և զամե-
նայն զօրութիւնս թշնամոյն: Եթէ
ծառայ գտար մեղացն, ես ազատեմ
զքեզ. զի ամենայն որ մեզս գործէ՝ ծա-
ռայ է մեղացն. իսկ եթէ որդին աստու-
ծոյ ազատեսցէ զձեզ, ճշմարիտ ազատք
լինիցիք:

4 **Վ** մեղաւոր՝ խորշմու յիմ յա-
հեղ և ի հրատեսիլ զօրութենէս. մի
երկնչիր, չեմ օտար. ազգական եմ քո,
որդի եմ գաւթի, թոռն եմ աբրահա-
մու. իօսակից և մարմնակից եմ քեզ:
Եւ ապա զի՞նչ կամիցիս՝ ի պատրաստի

կամ՝ ասած ինձ։ զոր ինչ բարի կամիցիս
վասն քո, դու աղդ արա, և ես կատա-
րեմ անյապաղ։ քանզի ոչ եկի պաշ-
տօն առնուլ՝ այլ պաշտել, և տալ զան-
ձըն իմ փրկանս փոխանակ բազմաց։

Զի՞նչ կամիս զի արարից քեզ՝ ասած
ինձ։ ոչ հրաժարիմ, զի սովոր եմ առ-
նել։ Եթէ զմատնչին զիս ի մահ՝ զոտսն
լուացի և ոչ տաղոկացայ։ ապա ո՞ր-
շափ առաւել զքոյդ ևս զիմոյ խօստո-
վանողիդ զգլուխս և զոտսդ լուացից
առանց դանդաղանաց։ ոչ յայլ ինչ ի-
րաց մաքրեմ, այլ ի մեղաց սրբեմ։ և
վերստին մաքրեմ։ Դու շիթ մի յար-
տասուաց հեղ ի կոնքս, և ես քան
զիոսանսն յորդանանու յորդագոյն հե-
ղում ի քեզ զշնորհս, և քան զառա-
ջին մկրտութիւն պայծառագոյն լու-
սաւորեցից։

Ով մեղաւոր՝ յաճամիս մեղար, զադ-

րացար, երկեա՞ր ի քննողէս։ մի կապեր
զխոստովանութիւնդ, և ես արձակեմ
զիմ բարերարութիւնս։ որպէս Պետրո-
սին սահմանեցի զչափն, դարձեալ քեզ
սահմանեմ։ Կամի՞ս որ հաշտիմ ընդ-
քեզ, դու մեկնեաց ի քո չար սովո-
րութենէդ, և ես մեկնիմ յիմ սրտ-
մուռթենէս։

Դու հարց վասն մեղաց քոց զեօթն
անգամ թողութիւնն, և ես պատաս-
իսանեցից քեզ զեօթանասնեկին եօթն՝
զոր քեզ շնորհեմ թողութիւն, զի զոր
ինչ ելանէ ընդ շրթունս իմ՝ զայն ոչ
ատեցից։ քննեազ զչափդ, իմացիր զթիւդ
և զհամարդ, և մի տրտնջեր զտանու-
տեառնէս։ Կամի՞ս զի թողից զպարտս
քո, լեմ ժլատ՝ առանտ եմ, ընչաւէտ
հօր՝ մեծատուն որդի, չտոկոսեմ զպար-
տապանդ, չպահանջեմ զպարտսն, չոր-
կանեմ իսեղդ, դու միայն յանձին կալ և

խոստովանեա զոր գործեցեր, և ես չո-
րեքհարիւր և իննսուն քոնքար թողում
քեզ. և ուրախ արձակեցից զքեզ:

5 Ա զ մեղաւոր՝ ընդէ՞ր փախչիս յի-
նէն, վասն զի բազումս մեղար. Եկ ա-
ռիս որդեակ իմ՝ ողորմելի՝ զի ոչ բար-
կանամ և ոչ մեղագրեմ. վասն զի իմ
ես արարած, իմ ես պատկեր, իմ նմա-
նութիւն, անտրատ ձեռաց իմոց ստեղ-
ծուած. և նորին աղագաւ խնայեմ՝ և
ոչ եղծանեմ զպատկերդ, ոչ խանգա-
րեմ զստեղծուածդ, ոչ տպականեմ
զնմանութիւնդ. վասն զի ողորմած եմ
և գթած, երկայնամիտ և բազումո-
ղորմ: Ոչ դժուարին ինչ խնդրեմ ի
քէն, և դու զի՞ աարակուսիս. միայն
դարձ առիս, և ես դարձայց առ քեզ.
միայն յապաշխարութիւն փութա. մի-
այն խոստովանեաց զմեզսդ. միայն մե-

դայ ասա անկանելով առաջի իմ, և ես
փառօք պատուեցից զքեզ:

Արդ՝ Եկ առիս և մի ամաչեր. քան-
դիչ յայտնեմ զմեղսդ. չանգոսնեմ զգոր-
ծողդ. չյանդիմանեմ զմեղաւորդ. չբե-
րեմ յերես զխայտառակութիւնդ. չյի-
շեմ զբազմութիւն չարեացդ. չմեղա-
գրեմ հիքացելումդ. այլ ողորմիմ յան-
ցաւորիդ. այլ գթամ ի կողովտեալդ.
այլ կենդանացուցանեմ զմեռեալդ:

Մի տրտմեցուցաներ զարարիչս քո
անդարձութեամբ. մի պատճառեր ըլ-
պատճառս մեղաց. մի ապաշնորհ առ-
ներ զիմ մարդասիրութիւնս. մի խան-
գարեր զիմ արարչութիւն. մի արտա-
քըս պահեր զիս յիմ տաճարէդ. մի
զրկեր զիս յիմ բնակութենէդ. մի կո-
ղովտեր յիմ ստացուածոյդ. մի թա-
փուր թողուր զիս յիմ գանձէդ. որ ոչ
եթէ այլ իրօք ստացայ զքեզ, այլ զար-

իւնս իմ ետու գին, և այնու ստացայ
զքեզ։ Եւ եթէ հայիս ինձ որ սուգ ու-
նիմ ի վերայ կորսուեան քո, զղջանաս
ի չարեաց քոց։ Ես այնպէս ծարաւի եմ
քո փրկութեանդ, որպէս եղջերու ի
յաղբերս ջուրց։

6 **Վ** մեղաւոր՝ շնորհեա ինձ զոր ինչ
ինդրեմն ի քէն։ Տուր ինձ զոր կամի-
մըն՝ զապաշխարութիւն։ Տուր ինձ զոր
սիրեմն՝ զզղումն։ Տուր ինձ զոր ցան-
կամն՝ զկաթ մի արտասուաց։ Տուր ինձ
զոր փափաքիմն՝ զհառաչ մի ի խորոց
սրտէ։ Տուր ինձ զոր բերկրիմն՝ զտրիւ-
րութիւն կերպարանացդ։ Տուր ինձ զոր
խրախանամն՝ զհամբարձումն ձեռացդ
և զտատանմունք մատանցդ։ Տուր ինձ
զոր ցնծամն՝ զբանիւ խոստովանիլն։ Ա-
ես սերովբէից և քերովբէից հաւասար
բարձրացուցից զքեզ։

Իսկ արդ ասաւ ինձ զինչ վնաս արա-
րի քեզ՝ որ այսքան ի սուգ և ի լաց
պահես զարարիչս քո՝ չարեացդ անդար-
ձութեամբ։ վասն այն՝ զի յոչ գոյէ ի
գոյ ածի. զի յանկենդանեաց զքեզ ո-
րոշեցի. զի յանասնոց բաժանեցի.
զի մարդ արարչագործեցի. զի յիմ նը-
մանութիւնս ստեղծի. զի ձեռօքս յօրի-
նեցի. զի պատկերակից ինձ անուանե-
ցի. զի բանականութեամբ պատուեցի.
զի իմաստութեամբ զարդարեցի. զի բազ-
մազան հանճարովք փարթամացուցի.
զի ազգի ազգի արհեստիւք ճոխացուցի
զի իշխանութեամբ մեծացուցի. զի
ի վերայ ամենայնի կացուցի։ Զի զեր-
կինքն լուսաւորօքն, և զօդդ թռչնովք,
զծով լողակօք, և զերկիրամենայն կեն-
դանեօք տնկովք և բուսովք ի վայել-
չութիւն և ի հնազանդութիւն քեզ ե-
տու. և այժմ ի վերայ այսր խոստա-

նամ կեանս յաւիտենականս, և արքա-
յութիւն երկնից:

7 Արդ՝ հարցանեմ զքեզ քաղցրու-
թեամբ ով մեղաւոր՝ և ոչ խստու-
թեամբ. աղէ ասա ինձ այժմ, վնասա-
պարտ եմ քո՝ եթէ երախտաւոր: Եթէ
արդարութեամբ խօսիս, ոչ եմ վնասա-
պարտ քեզ՝ այլ երախտաւոր. իսկ եթէ
երախտաւոր՝ ապա ընդէ՞ր միաբանեաւ
ես ընդ թշնամոյն իմոյ սատանայի. և
խոցես զիս ի լեարդս իմ յամենայն ա-
ւուր քառասայրի սրով:

Իմացիր և գիտեա՝ զի սուր մեղաց
մեղաւորին առաւել խոցէ զիս և վիրա-
ւորէ՝ քան զբացումն կողից իմոց՝ յոր
խոցեցայ գեղարդեամբն ի վերայ խա-
չին: Սաստկագին կսկծեցուցանէ քան
զհարումն բեեւացն ի խաչանողացն՝
ի ձեռս և ի յոտս:

Ուժգին մորմոքեցուցանէ զիս սուր
մեղաց մեղաւորին՝ քան զհարումն փուշ
պատկին ի գագաթն գլխոյս, որ կսկծե-
ցոյց ի յոտկր և յուղեզ: Առաւելապէս
գառնացուցանէ զճաշակելիս և զքիմն
իմ գառնութիւն և գարշահոտութիւն
մեղաց մեղաւորին, քան զլեղին և ըզ-
քայախն զոր արքի ի վերայ խաչին:

Դիտեմ զի զազգս խաչահանողաց ի-
մոց յորժամ տեսանես՝ ատես զնոսա և
անարգես, այլև կամիս մահու սպանա-
նել, զի զտէրո քո ի խաչ չանին, և
գու անմտութեամբ յամենայն աւուր
զգործս նայա գործես՝ յիս չարաչար մե-
ղանչելովդ: Արդ՝ գագարեանիչարեացդ՝
և եկ ի զզջումն սիրելի որդեակ իմ.
զի մի զբաժուկ դառնութեանն զոր ար-
բուցանելոց եմ նոցա՝ և քեզ ջամբե-
ցեմ:



8 **Ա**լդասք մեղաւորաց ասացէք ի՞նչ։
Ո՞նչ չար արարի ես մարդոյ, որ այդ-
քան երեսս էր շրջեալ ի քաղցրաբարոյ
արարչէս ձերմէ՝ որպէս ի թշնամոյ։
Ո՞չ աղաքն մարդն էր՝ որ կոխեաց ըզ-
հրամնաս արարչին՝ և ցանկացաւ աս-
տուածանալոյ. և ես փօխանակ նորա
մարդ եղէ, և մարդն աստուածացուցի։
Ո՞չ մարդն էր՝ որ մերձեցաւ ի ծառն.
և ես ի փայտ իսաչին զիս բարձրացուցի։
Ո՞չ մարդն էր՝ որ ոտիւքն ընթացաւ. և
ես զբեւեռն յոտո ընկալայ։ Ո՞չ մարդն
էր՝ որ ձգեաց զձեռն իւր ի ծառն. և
ես ի իսաչին տարածեցի։ Ո՞չ մարդն էր՝
որ քաղցրադաւ ի պաղոյն. և ես զքա-
ցաին և զլեղին արբի։ Ո՞չ մարդն էր
որ հաւանեցաւ կողածնին՝ և եկեր ի
պաղոյն. և ես զկողս իմ վասն նորա ի
իսաչին բացի։ Ո՞չ մարդն էր՝ որ զգործս
անիծից գործեաց. և ես վասն նորա

Կոչեցայ անէծք։
Ո՞չ մարդն էր՝ որ ոչ ասաց մեղայ. և ես
զելիէլին ի խաչին առ հայր գոչեցի։ Ո՞չ
մարդն էր՝ որ մահու գատապարտեցաւ,
և ես ի խոչին զմահ յանձն առի։ Եւ
դուք մեղաւորք՝ ի յայսքան բարերար
արարչէս ձերմէ երեսս գարձուցմնէք.
որ քաղցրութեամբ աղաչեմ զձեզ գալ
ի զղջումն և յապաշխարութիւն՝ և
առնուլ զթողութիւն։

9 **Ա**լ մեղաւոր՝ տամ զգաւաստան
իմ ի ձեռս քո, և գու տրածնաձ իրաւ-
ունըս. եթէ ես ոչ սիրեցի զքեզ՝ ապա
և գու յիրաւի տաես զիս. և եթէ սի-
րեցի, գու ընդէր յինէն ի բաց փախ-
չիս։

Խոկ եթէ ասիցես ընդ միտս, եթէ ոչ
կատարեալ սիրեցեր զիս։ Մանիր զի ոչ
է ձշմարիտ կտրծիքդ. զի ես զաշխարհս

բոլոր լրիւ իւրով վասն քո ստեղծի. ըզ-
գրախտն վասն քո յօրինեցի. զերկնից
արքայութիւն վասն քո պատրաստեցի.
զաեղի անկելոց հրեշտակացն քեզ թո-
ղի ժառանգել. միայն դու գարձիր ի
մեղաց քոց, և ես բերից զքեզ՝ զի աես-
ցես և յայելեսցես ընդ հրեշտակս իմ:

Տես՝ զի վասն քո յերկնից ի յերկիր
խոնարհեցայ, աստուածս մարդ եղէ՝ և
տէրս ծառայ: Վասն քո յատինի կացի
իբր զչարտգործ. ի հրէ ից գատապար-
տեցայ, ի պիշտատոսէ գանահարեցայ. ի
հերովդէէ կատակեալ արհամարհե-
ցայ, Վասն քո ի զինուորացն ձազե-
ցայ. ի ծառայիցն ապատակեցաւ. ի քա-
հանայիցն թուք յերեսո ընկալայ. ի ժո-
ղովրդենէն նախատեցայ: Վասն քո ըզ-
խաշն իմ ուսովս բարձի՝ և հանի ի գող-
գոթա. վասն սիրոյ քոյ հայհայեցայ,
թշնամանեցայ, և խաչեցայ: Վասն քո.

բեկոօր պնդեցայ. տիգաւ խոցեցայ.
պսակ ի վշոց ընկալայ. քացախ և լեզի
արբի. քղամիդ նախատանաց զգեցայ.
զաստուածաղին գլուխս խոնարհեցուցի,
դհոգիս ի ձեռն հօր աւանդեցի: Վասն
քո ի մարդկանէ պատեցայ. մարմնով ի
գերեզման իջի, հոգւով ի դժոխս գը-
նացի՝ և զարգելեալ հոգիսն ազատեցի.
ի յերրորդ աւուր յարեայ՝ և զքեզ յա-
րուցի ի մեռելութենէ մեղաց:

10 Ակ մեղաւոր՝ տես թէ որչափ սի-
րով սիրեցի զքեզ. զի յորժամ վասն քո
զմահն կրեցի յիս ի խաչին, հայր իմ
սուրջանայր, և հոգին սուրբ տրտմէր
վասն ստեղծանելոյ զմարդն: Զի՞նչ ասա-
ցից զգասուց հրեշտակաց, թէ որպիսի
սուր անհնարին եղեւ ի միջի նոցա.
քանզի կիզէր ի կոկայն երկինքն երկ-
նտորօքն, յորժամ տեսին զստեղծիչս

իւրեանց ի խաչին մահացեալ։ Եւ թէ
հրպէս արարածք ամենայն սուգ առեաւ
ովքային անմիջիթար, յորժամ տեսին
զարարիչո իւրեանց մերկացեալ ի խա-
չին, և զմահ յանձն առեալ։ Զի արե-
գակն և լուսինն հանդերձ ամենայն
աստեղօք մերկամային զլոյս իւրեանց,
և զխուար զգենուին. և երկիրս ի հի-
մանց սասանէր և գողայր. վէմք պա-
տաւէին. և վարագուր տաճարին ի
յերկուս ծուէնս ցելոյր։ Եւ մեռեալքն
մարմնով ոչ կարացին հանգուրժել, այլ
ի գերեզմանացն յարուցեալ ողբային
ընդ արարածոց՝ և վկայէին վասն յա-
րութեան իմայ։

11 ♪Ախտե՞ս արդեօք, թէ ի գիշերին
յորում ըմբռնեցայ, ո՞րքան սուգ և
արտմութիւն կայր ի մէջ սիրեցեալ ա-
շակերտաց իմոց. և տես զսաստկու-

թիւն տրտմութեան սուրբ առաքելոցն։
Զի մինչգեռ ոչ էին կալեալ զինուորքն
զվարդապետո իւրեանց, նոքա ոչ կա-
րէին ի բաց ունել զաչս, այլ ի խստու-
թենէ տիրութեանցն անկանէինի քուն
որպէս զթմրրեալս. իսկ ես մեկնէի ի
նոցանէ իրրեւ քարընկէց մի, և առ
հայր աղօթէի։

Ապաքէն մարդ յորժամ մահու եր-
կիւղ կրէ, քրտունքն ջնւր է որ հոսի։
իսկ ես վասն սիրոյ քոյ այնքան թոյլ ե-
տու երկիւղինի յաստուածացեալ մար-
մինս իմ, որ քրտունքն իմ արիւնա-
խառն կայլակնայեալ՝ և վոտկ վոտկ
իջանէին ընդ ճակատու իմ։ և մարմին
իմ յահագի, երկիւղէն սասանէր և
գողայր յոտից մինչև ցգլուխս. և կայի
անկեալ երես ի գետին՝ և ուժգին գոյ-
մամք առ հայր աղօթէի, եթէ հնար է
անցյէ բաժակս այս յինէն։

12 զ մեղաւոր՝ իմացիր թէ որչափ
սիրեցի զքեզ. զի յորժամ՝ հրէայրն
պաշարեցին զիս սուսերօք և բրօք՝ ջահ-
իւք և լավտերօք, ոչ կարէին ճանաչել
զիս: Վասն զի այնքան ծարաւիք էին
արեան իմոյ, զի որք անծանօթ էին զի-
նէն՝ և ոչ էին տեսեալ զսքանչելիքնիմ,
զնոսա առաքեցին. զի մի գուցէ ողոր-
մեսցին և փախուսցեն, և ոչ ըմբունի-
ցեն:

Իսկ ես հարցի քաղցր ձոյնիւ՝ զո
խնդրէք. և նոքա ասեն՝ զՅիսուս. ա-
սացի՝ ես եմ: և նոքա յտհէ իմմէ լղ-
դետնի հարան. և ես գթացեալ յարու-
ցի զնոսա. իսկ նոքա ոչ ողորմեցան
ինձ: Եհար պետրոս սրով, և ի բաց ե-
հան զունկն ծառայի քահանայապե-
տին. իսկ ես զսուրն Պետրոսի արգել-
եալ յետս գարձուցի. և զհատեալ

ունկն առեալ եդի ի տեղին, Ա բժշկե-
ցի. և ոչ այսու գթացան յիս:

13 Ե զինչ տսացից զանողորմ բա-
րուց նոցա. զի թէ անդամալոյձն՝ որ
անկեալ կայր ի սրահին բեդհեզդայ զե-
րեսուն և ութ ամ. որ այնքան տէր ոչ
ունէք՝ զի երբ ջուրքն յուղէին, մու-
ծանէին զնա յաւազանն զի բժշկեսցի.
մինչ այլքն վազվազակի լնդ յուղել ջր-
րոյն իջանէին, և բժշկեալ գնացին:
Իսկ տեսեալ իմ զտառապանս անդա-
մալուծին՝ գթացայ նմա և ողորմեցայ,
և բժշկեալ սղացուցի. գարձեալ տեսի
ի տաճարին՝ և պատուիրեցի ասելով,
այլ մի ևս մեղանչեր, զի մի ևս չորինչ
լինիցի քեզ:

Իսկ ի զիշերին յայնմիկ մինչդ եռ
զինուորքն կային ի բացեայ՝ և ոչ էին
մերձեցեալ յիս, անդամալոյձն այն՝

վասն այն զի ճանայէր զիս յորմէ հետէ
քժշկեալ էի, իսկայն փութացեալ իթր-
ոիչո՝ եհաս առաջի իմ. և զաւաջին
ապտակն նաև եհար յերեսս իմ. և ես
ինչ ոչ արարի նմաց վասն զի մարդասէր
իմ այլ և ի զգանալն նորա՝ արքայու-
թեան իմոյ արժանացուցի զնա:

Արդ՝ եթէ զայս գործեաց առիս.
ապա անձանօթ հրէայքն և զինուորքն
զինչ արարին ինձ ի գիշերին յայնմիկ.
և վասն սիրոյ մեղաւորիդ համբերեցի
այսըանեացս. և դու յայսպիսի բարի
արարէս երես գարձուցանես, և զիս ի
սուգ դաւնութեան պահես:

14 զ մեղաւոր՝ տե՛ս զսէր իմ ի վե-
րայ քս. զի յորժամ ըմբանեցին զիս,
թողին զիս միայն աշակերտքն իմ՝ և ին-
քեանք փախեան. գառնս մի էր՝ և գայլ-
քըն բազումք. ոչխարս մի էր՝ և գա-

զանքն յոլովիք. որո՞ջո մի էր՝ և արեա-
նաբբուքն յաճախ. անմեղս յանապա-
տի մի էր՝ և շանաբարոյ որսօղքն յո-
գունք. եզնս պարարակ մի էր՝ և զե-
նողքն շատք արդար աղաւնիս մի էր՝
և վայրենի թոշունքն բազումք. ողջա-
խոհ տատրակս մի էր՝ և սեաթորմի ա-
գուաւքն բազմերամք:

Եւ թէ զինչ գործեցին յայնժամ ըն-
դիս՝ ասացից և զայն: Նախ մերկա-
ցուցին զանկար պատմունանն իմ, և
ապա հանին զպարեգուն իմ. բացին
զգլուխ իմ, և կապեցին զձեւս իմ ի
թշնկանց կուսուէ. արկին չուան ի պարա-
նոցս իմ, և սկսան տանել. և թէ որ-
պէս, լուր և զայն:

Նոքա որք յաւաջմէ էին՝ քարէին ի
վերայ երեսացս, և որք զկնի՝ ձաղկէ-
ին զթիկունս. որք ի յաջմէ՝ ապտա-
կէին զծնօտս, և որք ի ձախմէ՝ թքա-

լից առնէին զերեսս. որք ի բացեայ՝ հող
արկանէին զգլիսովս, և որք ի հեռուտուն
ձայն բարձեալ հայհոյէին և անարգէ-
ին, որք ասկաւ մերձ՝ այլպանէին և կա-
տակեալ ծաղր առնէին նախատանօք.
կէսք փութով արշաւէին աւետատու-
յալպարանս քահանայալեաիցն. և ապա
զինչ: Խբրե լուան յաւետաւորացն,
փութանակի ձայն արձակեցին առ մի-
մեանս՝ եթէ կապեալ են զՅիսուս և բե-
րեն կապանօք, եկայք փութասցուք
ընդ առաջնորա:

Խոկ ով ոք էր յառաջ եկելոց բազ-
մութենէն՝ որ ոչ եհար զիս. ով ոք էր՝
որ ոչ ապտակեաց զիս. ով ոք էր՝ որ ոչ
ձաղեաց զիս. ով ոք էր՝ որ ոչ եթուք
յերեստիմ. ով ոք էր՝ որ ոչ կռիահար-
եաց զգլուխոիմ. ով ոք էր՝ որ ոչ բռըն-
ցի եհար զալպարանոցիմ. ով ոք էր՝ որ ոչ
բրօք հարկանէր զթիկունս իմ: Ով ոք

էր՝ որ ոչ թշնամանեաց զիս բանիւ,
կամ ոչ արհամարհեաց, կամ ոչ կա-
տակեաց, կամ ոչ ծաղր արար մինչեւ
հասուցին յապարանս կայիափայ և ան-
նայի. և ես վասն սիրոյ քո զայս ամե-
նայն կրեցի. և գու ատես զիս, և ըզ-
մեզս սիրես:

15 Ապա եթէ ասեմ զոր ինչ արարին
ընդիս, յորժամ յապարանսն մուծին
կայիափայ և աննային, զարհուրիս ի
լուելն: Ասուցին՝ ոչ անիրտաւըար դա-
տիմք մեք զՅիսուս, այլ օրինօք և գա-
տաստանաւ. եղին ատեան, և նստան
քահանայալեաքն հանգերձ ծերովք.
կացուցին սուտ վկայք, թէ հակառակ
Աստուծոյ է. թէ իսափանիչ օրինաց է.
թէ լուծիչ շաբաթոււ է. թէ քակիչ
տաճարի է. թէ հայհոյիչ Աստուծոյ է.
թէ զաւանդս ծերոց արհամարհէ. և

այլ եւս բազումն։ Եւ այնուհետեւ ոկը-
սան աղաղակ բառնալ և ասել՝ ոմանիք
թէ մահապարտ է, ոմանիք թէ ի խաչ
հանել արժան է։ այլք պատառէին ըզ-
հանգերձու թէ չարագործ է։ և ես
տարեալ համբերէի ամենայնի վասն մե-
զաւորիդ։

Եւ անտի հանեալ տարան ի տունն
ամենայի, անտի յապարանսն պիղատո-
սի, անտի յիջւանս հերովդէի, անտի
դարձեալ յապարանսն պիղատոսի և
զգիշերն ամենայն ոչ ետուն հանգիստ
ական թօթափել մի, այլ չըջեցուցա-
նէին յապարանից յապարան։ Եւ թէ
որչափ ծաղը և նախատինս և անար-
դանս և չարչարանս անցուցանէին ի
գլուխս իմ զգիշերն ամենայն ի տա-
րուբեր առնելն՝ զայնոսիկ թսզում,
զի ոչ կարես տանել։

16 **Ե**ւ զիանը լիցի քան զայն առա-
ւել սէր՝ որ զքեզ ոիրեցի, զի և ոչ
մօր իմոյ մարիամու ողորմեցայ. յոր-
ժամ տեսանէր մայր իմ զմիածին որդի
իւր զարարիչս երկնի և երկրի ի վերայ
խաչին մերկացեալ՝ և զմարմին իմ՝ ա-
րիւնըւուշտ ներկեալ. բեեռօք պըն-
դեալ. զկողա հերձեալ. զերեսս իմ այ-
լագունեալ. զգլուխս խոնարհեցու-
ցեալ. զոգիս տւանգեալ։

Արդ՝ կարէ՞ ոք ի մարդկանէ կամ ի
հրեշտակաց իմանալ, թէ որբան սուգ
ունէր նա, որբան կսկծէր. որբան այ-
րէր սրտիւ. որբան մորմնքէր. որբան
խարշտէր. որբան վաւէր. որբան
սգայր. որբան հեծեծէր. որբան հաւա-
չէր. որբան տիսրէր. որբան խոռովէր.
որբան տագնապէր. որբան յոգւոց
հանէր։ Ո՞րպիսի ողբայր. ո՞րպիսի ար-

տասուս հեղոյք. ո՞րպիսի երգս եղանակէր. ո՞րպիսի ձայնս արձակէր. ո՞րպիսի բանս բարբառէր. Զիմրդ զիրկս խաչին արկանէր. զիմրդ զբազուկն իւր ձգէր առիս, և ոչ հաս ոնէր. զիմրդ յերկիր անհանէր. զիմրդ հող զգլխովն տայր. զիմրդ կակոնէր. զիմրդ թախանձէր. զիմրդ խանդազատէր ընդգէմ մի սննիս իւրոյ մահայելոյ. զիմրդ զերկնախն զօրսն ի յողբս խոնարհեցուցանէր. զիմրդ զրդալի արտրածը յարատառաւս շարժէր. զիմրդ զիւզաբէր կանայսն ընդիքեան յերկիր ընկենայք:

ԱՌԴ ի ժամուն յայնմիկ՝ մայրն իմ որ զայսպիսի կոկծիս կրէր, մեռեալ էր, եթէ կենդանի. յարթնութեան էր, եթէ յերազի. ի զգաստութեան էր, եթէ ի թմբութեան. և այսքան աղետից մօր իմոյ ես ոչ ողորմեցայ լասն քո,

և դու երեսս շրջես յինէն՝ և ի թշնամոյն կողմն դառնաս:

17. Վ մեղաւոր իմա՝ որ այժմ քաղցրութեամբ կոչեմ զքեզ յապաշխարութիւն, և դու ոչ լսես ինձ. եթէ յանզընջութեանդ մեռանիցիս, մի այնքան երկնչիր ի բազմութենէ մեղաց քոյ որքան յիմ երախտեացս և ի չարչարանաց. զի քան զմեղաց քոյ հատուցումն հազարապատիկ տանջելոց եմ զքեզ ի հնոցի հրոյն որ արհամարհեցեր զարչարանս իմ, և ունայնացուցեր զմարդեղութիւնս իմ, և ի զուր հաներ զիջումն իմ յերկնից յերկիր որ վասն քո:

Զարչարանքն իմ զոր կրեցի վասն մեղաւորաց, այն պարտք է ի վերայ մեղաւորաց. զի թէ ապաշխարութեամբ ոչ վճարեսցեն ըզ պարտս չարչարանաց

իմոց և առցեն թողութիւն, իդատաստանի իմում զմեղաց իւրեանց հատուցումն այն չափովն եմ տալոց՝ որքան գործեցին. իսկ զպարտս չարչարանաց իմոց հարիւրապատիկ՝ զի արհամարհեցին:

18 Ա՛վ մեղաւոր ասա ինձ՝ զինչ
վնաս տեսեր յարաքէս քո Քրիստոսէ,
որ այսքան ատես զիս. կամ զինչ
բարութիւն տեսեր ի սատանայէ, որ
այդքան սիրես, և զկոմս նորա կա-
տարես, քո զազիր գործովդ: Եթէ
ունին մատուցանես ինձ, ահա այժմ
զսաւանայի բարութիւն ցուցանեմ
քեզ զոր արար: Ո՞չ սատանայ էր՝ որ
զմայր քո խաքեաց օձիւն, և նովաւ
զհայր քո աղամ: Ո՞չ սատանայ էր՝ որ
ետ ուտել հօր քում զպտուդն: Ո՞չ
սատանայ էր՝ որ մերկացոյց իլուսեղէն

պատմուճանացն: Ո՞չ սատանայ էր՝ որ
փախոյց յերեսաց աստուծոյ, և թա-
քոյց ի ներքոյ թգենւոյն: Ո՞չ սատա-
նայ էր՝ որ ի ներքոյ անիծիցն աստու-
ծոյ մատնեաց զհայր քո և զմայր:
Ո՞չ սատանայ էր՝ որ ետ արտաքսել
յասուուածավայելուչ գրախտէն անմա-
հութեան, և գրաւեաց ի ներքոյ մա-
հու: Ո՞չ սատանայ էր՝ որ զամս ինն
հարիւր կսկծեցոյց ընդգեմ անմահա-
կան գրախտին սաստկագին արտասու-
օք: Ո՞չ սատանայ էր՝ որ զպայծաւու-
թիւն լուսեղէն պատմուճանին հօր քո՝
ի մաշկեղէն հանգերձ փոխարկեաց:
Ո՞չ սատանայ էր՝ որ զանաշխատ վայելու-
մըն ի պտղոց գրախտին՝ ի քրտունք
երեսաց գարձոյց վարել: Ո՞չ սատանայ
էր՝ որ զրկեաց ի հրեշտակական աճ-
մանին՝ և արժանացոյց անասնական
աճման, և այն՝ ցաւօք և տրտմու-

թեամբ: Ո՞չ ստունայ էր՝ որ զհոգիս
հօր քո ծննդովը իւրովք զամս հինգ
հաղար ի դժոխս արգելեալ պահեաց,
մինչեւ ես գթացեալ ողորմեցայ, և ե-
կեալ խաչիւն ազատեցի: Արգ՝ եթէ ընդ
նախնի հայրն քո ադամ զայս արար,
ընդ քեզ ապա զինչ կամի առնել՝ որ
այդքան սիրես զսատանայ. և դու միտ
դիր զի և զքոյն ասացից:

19 Ալ մեղաւոր՝ կամի զքեզ սատա-
նայ ջնջել ի հօր աստուծոյ որդեգրու-
թենէ: Կամի որոշել ի հոգւոյն սրբոյ
բնակութենէ: Կամի բաժանել զքեզ
յորդւոյս աստուծոյ եղբայրութենէ:
Կամի զքաղցր սէրն աստուծոյ հօր՝ որ
զմիաձինս ետ վասն քո ի մահ, ի յա-
տելութիւն փոխել: Կամի զերթեկու-
թիւն հոգւոյն սրբոյ՝ ի քէն արգելով:
Կամի յաստուածային անճաւ շնորհաց

վայելչութենէն զրկել: Կամի զտիրա-
կան տաճարդ հիմնայատակ քակել:
Կամի զարարչին իմաստութեանն յօ-
րինուած պատկերդ՝ ի յերկիր կոխել:
Կամի զցանկալի տիպդ երրորդու-
թեանն՝ չարաչար մեղօք եղծանել. և
այլն ի կարգին:

20 Ալ մեղաւոր՝ որ սիրեսդ զսա-
տանայ, տե՛ս զցանկութիւն դորա վա-
սըն քո: Յանկայ սատանայ զսւազա-
նին շնորհի զոր ընկալար ի հոգւոյն
սրբոյ՝ ի քէն եղծանել: Յանկայ ըգ-
մկրտութեան լուսապայծառ պատմու-
ճանն զոր զգեցար՝ մերկացուցանել:
Յանկայ ի կենարար մարմնոյ և յարենէ
իմմէ սովամահ զքեզ սատակել: Յան-
կայ զերկնային հարսանեաց հանդերձդ
աղոտեղացուցանել: Յանկայ զլապտեր
կուսութեան քո շիջուցանել: Յանկայ

զբայեալ գրունս առագաստի երկնաւոր
փեսայիս ընդգէմ քո փակել։ Յանկայ
գվայելուց տունիդ ադենական դրախ-
տին յարմատոց իւլել։ Յանկայ զուռնդ
գեղեցիկ՝ որ հաստատեալ ես ի ճշմա-
րիտ որթա յիսուս՝ սրով հատանել։
Յանկայ զանթաւամ ծաղիկդ արարչին՝
խորշակաւ մեղաց թառամել։ և այն
ի կտրգին։

21 **¶** Վ մեղաւոր՝ փորձեան և զչարին
սատանայի՝ որ սիրեսդ զնա։ Զչարի ստ-
ուանայ՝ եթէ ի մեղացդ քոց զզջասցիս։
Զչարի՝ յորթամ զգործեցեալ յանցանդդ
խոստովանեսցիս։ Զչարի՝ յորթամ մե-
ղայ ասելով առ տէր քո դարձցիս։
Զչարի՝ յորթամ անկեալ յերկիր՝ տ-
րիս արտասուօք պաղատիս։

Կիրուսորի դառնապէս՝ յորթամ յի-
նէն զթողութիւն մեղաց քոց ընկալ-

ցիս։ Նախանձի բորբոքմամբ հրոյ՝ յոր-
ժամ ըզ տէրս քո ապաշխարութեամբ
վերըստին ի հոգիդ քոց ընդունիցիս։ Տո-
չորի կսկծմամբ՝ յորթամ յարարչու քո
պատուօք մեծարիցիս։ Տագնապի մե-
ծաւ տանջանօք՝ յորթամ անթարշամ
բրաբիոնօք պայծառասցիս։ Կատաղի
բարկութեամբ չարաչար՝ յորթամ եր-
կընային փառօքս իմ պսակեսցիս։ Մա-
հանայ չարութեամբ՝ յորթամ անվախ-
ճան կենօք ընդ հրեշտակս իմ պարառ-
եալ՝ յարքայութեանս երկնից քերկու-
թեամբ հրճուեսցիս։

22 **§** Ես ով մեղաւոր, որ սիրես զսա-
տանայ՝ և կատարես զկամս նորա, եթէ
զինչ խոստանայ քեզ։ Խոստանայ քեզ
սատանայ բարութիւն՝ զանդունդս ան-
գնդոց։ Խոստանայ քեզ վայելլութիւն՝
զգոդեցեալ և շարաւալից՝ զտաղտկալի

և զազրալի տեսութիւն կերպարանաց
իւրոց, որ դառնագոյն է քան զհուք
գեհենին: Խոստանայ քեզ զպարակցու-
թիւն ժանտատեսիլ և գարշատեսիլ
գասուցն դիւաց: Խոստանայ քեզ հան-
գիստ՝ զկաթսայս անդնդային եռանդի-
ցըն, և զգոգս հրաբորքոք տապականն:
Խոստանայ քեզ պատմուճան՝ զխաւա-
րըն արտաքին, որ է թանձր և շօշա-
փելի. ուր լալ աչաց է՝ և կրծել ա-
տամանց: Խոստանայ քեզ սեղան՝ զծո-
ցըս լայնութեան յատակացն դժոխոց:
Խոստանայ քեզ զենլիք՝ զորդունքն ան-
քուն և զվիշապքն ահագին հրեղէն
ծովուն: Խոստանայ քեզ կերակուր՝
զհալս քրայից հալոցացն սարսուելի ի-
ջելոցն: Խոստանայ քեզ ըմպելի՝ զսար-
սափելի հոսանս հրեղէն գետոցն: Խոս-
տանայ քեզ լապտերք՝ զցոլմունս շան-
թից հրաբորքոք փայլատակման կայծա-

կանցն: Թող զտարտարոսն և զայխն
ամենայն՝ զոր խոստանայ սատանայ իւ-
րոց սիրողացն և կամարարաց:

23 Ա'կ մեղաւոր՝ ընդէ՞ր զերախտիս
արարչիս քո ոչ իմանաս. զի սատանայ
յամենայն աւուր մահուանդ սպասէ,
զի ի մեղս մեռցիս. և ես աներեոյթ
զօրութեամբ իմով կիզեմ միշտ որպէս
հրով. և հրեշտակք իմ հարկանեն զնա
հրեղէն սրով. և ի բաց փախուցանեն
ի քէն, զի մի մահու վնասեսցէ քեզ:
Գիտէ չարն զի ես մարդասէր եմ. և
երկնչի՝ եթէ մարդ մեղաւոր կենգանի
մնալովն յանկարծակի զղջասցի, և ո-
ղորմութիւն գտցէ ի ձեռս աստուծոյ,
և ելանիցէ յինքենէ:

Ապա ընդէ՞ր ի բաց փախչիս ի քաղ-
ցըր քրիստոսէս քումմէ, որ հրեշտակք
անդադար տեսանելով՝ ոչ յագենան ի

քաղցրութենէ իմմէ. զինչ չար կամիմ քեզ, որ այդպէս հրաժարիս յինէն։ Կամ այն՝ զի զմոլորեալդ խնդրեմ, զի զկորուսեալդ գտանեմ. զի զիիրաւորեալդ սփոփեմ. զի զշարուածեալդ վերաբերեմ. զի զտարաբերեալդ ի հողմոց հանդուցանեմ. զի զծփեալդ ի յալեաց խռովութեանց՝ ի նաւահանդիստն աշեմ։

24 կ' մեղաւոր՝ ի միտ առ թէ զինչ կամիմ քեզ առնել. և սիրեալ զիս որ սիրեցի զքեզ, և սիրեմ զքեզ, և սիրելոց եմ զքեզ։ Կամիմ ի հիւանդութենէդ բժշկել զքեզ. կամիմ ի մեռելութենէ մեղացդ յարուցանել։ Կամիմ յանփարատելի սգոյդ հանել. կամիմ ի դառն տրումութենէդ միիթարել։ Կամիմ ի սաստիկ վիրացդ

բժշկել. կամիմ ի չար տառապանացդ զերծուցանել։ Կամիմ ի տոռանց կապանաց մեղացդ արձակել. կամիմ ի ծառայութենէ չարեացդ ազատել։

Ով մեղաւոր՝ ծանիք եթէ անյիշաչար տէրս քո զինչ խորհիմ քեզ։ Խորհիմ զի անձամբ իմով եկեալ զանբուժելի խոցուածս հօգւոյդ քո տեսից։ Խորհիմ զի զգարշութիւնս դորա ձեռօք իմովք լուացից։ Խորհիմ զի զաղոնդութիւն դորա դաստառակաւ իմով որբեցից։ Խորհիմ զի զնեխեալ փթութիւն դորա կորբեցից։ Խորհիմ զի ըգթարախն ի հոգիդ քո բունեալ քամեցից։ Խորհիմ զի զարտասուս իմ աստուածային ի վերայ աղտեղութեան հօգւոյդ աղբիւրաբար հեղից։ Խորհիմ զի զբաղմութիւն ամենայն չարեաց դորա օնջեալ մաքրեցից, և յառաջին վիաւսն հասուցից։ միայն զոջացիք ի

չարեաց քոց և դադարեա՛: Խոստովա-
նեա զյանցանս քո՝ և ասս մեղայ. և
ես ջնջեմ զբազմութիւն մեղաց քոց,
թէպէտ և կարի սաստիկ ես մեղու-
ցեալ:

25 **¶** Վ դասք արդարոց հաւատարիմ
ծառայք իմ, մի զարմանայք ընդ ա-
նոխակալ փրկիչս ձեր, եթէ զիա՞րդ
այսքան խանդաղատիս տէրդ մեր և ա-
րարիչ ի վերայ մեղաւորաց: Արդ՝ միտ
գիք, զի ասեմ ձեզ զսէր իմ՝ զոր ու-
նիմ ի վերայ մեղաւորաց: Երամք ինունց
գասուց հրեշտակացն՝ որոց թիւք բազ-
մութեան անթուելիք են ի մարդկանէ և
անգիտելիք, այնքան հրաբուն էու-
թիւնքն և լուսապսակ բազմութիւն-
քըն, յորժամ տեսանեն զսաստիկ սուգ
իմ՝ զոր սգամ ի վերայ միոյ անդարձ
մեղաւորի, ամենեքեան առ հասարակ

մեծաւ գողութեամբ ջանան միսիթա-
րել զիս. և ոչ կարեն սակաւ մի հան-
գարտեցուցանել զսուգ իմ. զի վա-
սըն այնորիկ զմահ խաչի յանձն առի,
զի մի ոք երբէք կորիցէ: Այլև գունդք
ամենայն արդարոցն՝ որք կան առիս
յարքայութեանս իմում, գողան ողբա-
լով առաջի իմ. և ոչ բաւեն փոքր մի
փարատել զտրտմութիւնս իմ:

26 **¶** ուր և զայլ ահաւորս որ պատ-
մեմ քեզ. զի մայրս իմ աստուածածին
յորժամ տեսանէ զիս ի յայսքան տա-
րակուսանս, ի ծունկս անկանի առաջի
իմ. և զստինոն բազեալ որով դիեցի,
ողբալով աղաղակէ՝ և զմատունսն տա-
տանէ՝ ասելով. Որդեակ իմ միածին,
միթէ ոչ էր բաւական վիշտն այն և
տրտմութիւն՝ զոր կրեցեր յաշխարհի
ի հրէիցն և ի խաչահանողացն, և դեռ

ևս տրումի՞ս. ընդէ՞ր ոչ ողորմիս մօրս
քո լալագին, և ոչ հանդարտիս սակաւ
մի ի տիրութենէգ։ Ո՞չ էր բաւական
մօրս տառապելոյ կսկիծն այն և մոր-
մոքումն, յորժամ տեսի զմիածինդ իմ
ի խաչին, արիւնաներկ մարմնով մահա-
ցեալ. և դեռ ևս հրով կիզե՞ս զսիրոս
իմ սուգ ունելովդ։ Եւ այսու ամե-
նայնիւ բնաւ ոչ գայ ի սիրտ իմ ուրա-
խութիւն, որքան տեսանեմ զանդարձ
մեղաւորն արտաքս ելեալ ի գաւթէ,
և հեռացեալ ի հօտէ իմմէ, և անկեալ
ի ձեռս սատանայի։

Վասն զի այնքան կսկծի սիրտ իմ՝
և տրտմի հոգի իմ ի վերայ միոյ ան-
դարձ մեղաւորի, որ երկինս երկնաւո-
րօք, և երկիրդ երկրաւորօք, և ծով
ամենայն լրիւ իւրով իբրև յոչինչ հա-
մարին յաշս իմ։

27 **Ը** մի զարմանար ընդ այսքան
ակէկիզիլս իմ ի վերայ մեղաւորաց.
ծանիր ով մորդ, զի յորժամ տնկես
զբարունակ մի, և յետ երրորդ ամի
աշխատութեան քո՛ եթէ ոչ տացէ պը-
տուղ քեղ՝ վիրաւորիս դու ընդ այն.
իսկ եթէ չորասցի, սգաս մեծաւ տրո-
մութեամբ, թէ ի զուր աշխատեցայ
զերիս ամս, և ջանն իմ կորեաւ։

Ապա զիա՞րդ ես ոչ տրտմեցայց ի վե-
րայ մեղաւորին, որ վասն նորա յերկ-
նից ի յերկիր իջի, ի կուսէ մարմին
առի, աստուածս մարդ եղէ, և տէրս
ծառայ. զամն երեսուն և երեք ի յեր-
կրի շրջեցայ. կենարար վարդապետու-
թեամբս ի լսելիս մեղաւորաց միշտ
քարոզեցի. աստուածային նշանօքս ըզ-
բազումն բժշկեցի. ազգի ազգի չարչա-
րանս և նախատինս կրեցի. ի խաչին

բարձրացայ. զարիւնս իմ գին ետու,
և ի գերողէն առեալ փրկեցի:

Արդ այս ամենայն չարչարանացս ի-
մոց պտուղ՝ վրկութիւն մեղաւորին է:
Իսկ եթէ մեղաւորն ի մեղս մեռանիցի,
պտուղ չարչարանաց իմոց կորնչի և ես
ի խոր խոցոտիմ և վիրաւորիմ. զի ու-
նայն եղեւ տնօրէնութիւն իմ վասն նո-
րա: Իսկ յորժամ մեղաւորն զղանայ
ի մեղաց իւրոց և գայ յուղղութիւն,
ուրախանամ ես և ցնծամ. յայնժամ
ցնծայ ընդիս հայրն իմ և հոգին սուրբ:
Խրախանան և ամենայն հրեշտակը իմ.
Հրճուին ամենայն գունդք արդարոց,
և ցնծացեալ բերկրի մայր իմ թա-
գուհի. և ի միասին պար առեալ տո-
նախմբութիւն մեծ կատարեն յերկինս
առաջի իմ. վասն զի պտուղ չարչա-
րանաց իմոց ոչ կորեաւ:

28 Վ մեղաւոր՝ սիրեա զիս որ սի-
րեմն զքեզ. հրաւիրեա զիս առ քեզ
զբաղձալիս հրեշտակաց և հրեշտա-
կավետաց, և զցանկալիս արդարոց.
ոչ գարշիմ ի հողեղէն յարկացդ. Հը-
տաղտկամ յաղքատութենէդ. չխո-
տեմ զանմաքրութիւնդ:

Վաքրեա զառագաստ սրտիդ. ջա-
նա բուրել հոտ անուշութեան զազօ-
թըս. պատրաստեա սեղան զվարսդ.
պարգեեա գինի զողորմութիւնդ. սրփ-
ուեա պաստառակալ զխոստովանու-
թիւնդ. փթթեա վարդ զսէրդ. արկ
բազմակալ զապաշխարութիւնդ. լար-
եա զտասնաղի մատանցդ տռաջի իմ ի
քնարահարութիւն. կոչեա զսուրբս քեզ
ի բարեխօսութիւն՝ և ինձ հիւրամե-
ծար. բաւական է ճաշդ. առաստ է սե-
ղանդ. պայծառ. է կոչումնդ:

Եւ եթէ ախորժես, զհայր իմ ընդիս
ածեմ. ես և հայր իմ եկեսցուք, և
օթևանս առ քեզ արասցուք։ Զայս
այսպէս արասցես, և զիս երախտաւոր
առաջի հօր իմոյ կացուցես. զի խոր-
հուրդ գալստեան իմոյ յաշխարհ ոչ ու-
նայն երեսցի. այլ ծանիցի մարդկայինն
բնութիւն առաւել քան զհրեշտակաց
և զհրեշտակապետաց։ Եւ խրախա-
ցեալ հայր իմ օրհնեսցէ քեզ բերա-
նովն իւրով յօրհնութիւնս՝ որ ոչ ան-
ցանէ. և պատրաստեսցէ քեզ զտեղի ի
վեր քան զբնակութիւնս հրեշտակաց.
ուր եսն եմ՝ անդ և պաշտօնեայն իմ
եղիցի. և կեանքն ձեր ծածկեալ են
ինեւ առ աստուած։ Եւս ի միւսան-
դամ գալստեան իմոյ՝ զօրհնեալսն ի
հօրէ իմմէ մերձեցուցից առ հայրն իմ,
և ասացից ահաւասիկ ես և մանկունք
իմ զորս ետուր ցիս։

29 Ավ մեղաւոր՝ ընդէ՞ր ոչ երկնյիս
յահեղ զօրութենէ իմմէ, որ ոչ գառ
յուղութիւն, մինչ սիրով և քաղցրու-
թեամք կոչեմ զքեղ յապաշտարու-
թիւն։ Մանիր զի ի հայելն իմ՝ երկիր
ի հիմանէ գողայ, և լերինք որպէս ըգ-
մոմ հալին, և ծովք իբրև զիսուիւ չո-
րանան, և գժողք յեւ խորագոյն ան-
դունդս ընկդմի։ Եւ զիանդ ոչ զարհու-
րիս, զի զօրութիւն իմ զհողմ զհուր
հատանէ։ Կամ թէ որպէս ոչ սոսկաս,
զի անճառ բնութիւնք ահեղակերպեց
հաշեալ տապակին ի հրակիզմանէ փայ-
լատականց ահաւորութեան իմոյ։ Կամ
զիանդ ոչ սարսափիս, զի սերովքէք և
քերովքէք ծածկեն զգէմս իւրեանց
բոցանիւթ թեօք յահարկութենէ իմ-
մէ։ Եւ զիանդ ոչ գողաս, զի թէ կայր
հնար փախստեան, ոչ կարէր կալ եր-

կինք առաջի իմ։ նա՝ և ամենայն տար-
րական տեսակք, և երկիր լրիւ իւրով՝
հանդերձանդնդային հաստատութեամ-
բըն հեղոյր յայլես անհուն խորութիւն
յերկիւդէ իմմէ։ Եւ կամ ո՞րպէս ոչ
սասանիս, զի թէ երկինք երկնից ունէր
ևս տեղի թաքստեան, ոչ հանդուրժէր
կալ ի ներքոյ պատուանդանի ոտից իմոց
ի յահէ իմմէ։ Եւ կամ զիարդ ոչ պակ-
նուս, զի եթէ գոյր հնար ծածկու-
թեան, ամենայն բանակք անմահից դի-
մեալ անկանէին ի նա, և թաքչէին
յերկիւդալի արփիտփայլ ճառագայթից
իմոց։ Եւ վասն այն ներեմ քեզ, զի մի
կորիցես զյաւիտենական կորուստն.
այլ ի զղջումն եկեալ՝ փրկեսցիս ի հրոյ
գեհենին. և դու արհամարհես զարա-
րիչս քո, և ոչ երկնչիս և դողաս ի յա-
հեղ զօրութենէ իմմէ։

30 զ մեղաւոր՝ մինչդեռ ես քաղց-
րութեամբ խօսիմ՝ ընդ քեզ, երկնչիր
յինչն, ողորմեաց քեզ, զի եթէ ի հրեշ-
տակս իմ ոչ ինայեցի որ ընդդէմ իմ
հպարտացան. այլ ի յերկնից ի յան-
գունդս իջուցի բարկութեամբ իմով։
Եւ առ նոյիւ՝ որ յաճախեցան ի պո-
ւընկութիւնս, զայնքան բազմութիւն
մարդկան առ հասարակ ջրհեղեղաւն
հեղձուցի։ Զսոդոմ և զգոմոր՝ որ ար-
տաքոյ բնութեան զչարիսն գործէին,
երկնատեղաց բոցովն կիզեալ մաշեցի։
Զգուռզն փարաւոն՝ որ խստացաւ ընդ-
դէմ իմ բազմութեամբ զօրաց իւրոց
ի ծովն կարմիր ընկղմեցի։ Զկորիւեանքն
և զարիրոնեանքն՝ որ զքահանայու-
թիւն իմ բունութեամբ յափշտակել
կամմէին, զերկու հարիւր և յիսունսն ի
հրոյ բուրփառացն այրեցի. և զբանակն
աբիրոնի՝ զերկիր պատառեալ յանդուն-

Դըս ընկղմեցի։ Զերիքով՝ որ ընդդէմ
իմ թշնամի դարձաւ, զպարիսպս նորա
որպէս զջուր հեղի։ և զբնակիչս նորա
ի սուր սուսերի մաշեցի ձեռամբ ծա-
ռային իմոյ յեսուայ։ Զգօրսն սենեքա-
րիմայ արքային ասորեստանեայց՝ որ
հայհոյեաց զանունիմ սուրբ, զհարիւր
և ութսուն և հինգ հազարմ՝ ի գու-
ըն քաղաքին իմոյ երուսաղմէմի ի յա-
կան թօթափելն ի մէջ գիշերին՝ եսու
հրաման հրեշտակի իմոյ, զի սատա-
կեսցէ զնոսա հրեղէն սրով։

Իսկ արդ՝ ովէ որ հակառակ կամաց
իմոց գործէ, և ոչ չարաչար պատու-
հասի. նոյն Աստուածն եմ, եթէ ի բա-
զումս ոչ խնայեցի, նոյնպէս և ի մինդ։
Եթէ քաղցրութեան ձայնի իմոյ ոչ լուի-
ցես, և զղասցիս ի մեղաց և դարձիս,
հարիւրապատիկ ևս զքեզ առա-
ւել տանջելոց եմ քան զնոսա ի գեհ-

Ֆան հրոյն. որպէս ասացի, թէ դիւրա-
գոյն լիցի յաւուրն դատաստանի սողո-
մացեցւոց և գոմորացւոց քան քաղա-
քիս այսմիկ։ յայսանու զնոսի նոյն ձաւու

31 Ապա եթէ ասիցես ընդիս, տէր
իմ այսուհետեւ և ես սարսիմ և գո-
ղամ մեծաւ երկիւղիւ յահեղ զօրու-
թենէ քումմէ, որպէս և ամենայն
արարածք. բայց զի՞նչ արարից, քանզի
տարակուսիմ ի բազմութենէ մեղաց
իմոց, եթէ զիարդ ողորմեսցիս և թո-
ղուցուս ինձ։ Իսկ արդ՝ ի միտ առ զա-
նուանս իմ, և ուրախ լեր, և մի տա-
րակուսիր ընդ բազմութիւն մեղաց
քոց։ Անուն իմ ողորմած է. անուն իմ եր-
կայնամիտ է. անուն իմ բազմումոզրմ
է. անուն իմ անոխակալ է. անուն իմ
անյիշացար է. անուն իմ քաղցր է.

անուն իմ ամենաբարի է. անուն իմ մարդասէր է: Անուն իմ բժիշկ հիւանդաց է. անուն իմ յարութիւն անկելոց է. անուն իմ կեանք մահացելոց է. անուն իմ լոյս խաւարելոց է: Անուն իմ փըրկիչ գերելոց է. անուն իմ նորոգիչ հընացելոց է. անուն իմ գտիչ մոլորելոց է, և այլն ի կարգին. և գու ընդէրտարակուսիս ի բազմութենէ մեղաց քոց:

32 **Եւ** որովհետեւ խոստացար ինձ,
թէ այսուհետեւ և ես երկնչիմ ի քըրիստոսէդ իմմէ, և տարակոյսդ քո վասրն շատութեան մեղացդ էր. նմանապէս և ես այսուհետեւ յաւելում ըդսէրն իմ, զգութն իմ և զողորմութիւն իմ ի վերայ քո. և խրատ տամքեզ եթէ զինչ արացես գու,
ով մեղաւոր՝ միայն զայս արացես,

զի հրաժարեսցիս ի հնազանգութենէ չար կամացն սատանայի, և հեռասցիս ի պիղծ գործոցդ սովորութենէ. եկեսնի՞ր ի զղումն որպէս զղամէք. ասաառ հայր քո մեղայ, որպէս զանառակ որդին. խոստովանեա զբազմութիւն մեզաց քոց, որպէս զմարգարէն դաւիթ. ապաշխարեա զանօրէնութիւնս քո որպէս զմանասէ. աղօթեա առ տէր, ասելով՝ աստուած քաւեա զիս զմեղաւորս, որպէս զմաքսաւորն. արտասուեա զյանցանս քո, որպէս զպերոս. գադարեաց ի չար գործոց քոց, որպէս զկինն պոռնիկ. ասա յիշեա զիս յարքայութեան քում, որպէս զաւագակն. և տես եթէ զինչ արարից այնազօր տէրս քո զբազմութիւն մեջնազօր զաց քոց:

33 Վ մեղաւոր՝ եթէ ի տուր և յառ
շնչոյդ զեօթանասնեկին եօթն ես մե-
զուցեալ. և թէ անթիւ են չարիք քո
քան զաստեղս երկնից. կամ անհամուր
է անօրէնութիւն քո քան զալիս ծո-
վու. և կամ շատ է քան զաւազս՝ որ
ընդ ոլորտս տիեզերաց. և թէ յաճախ
քան զշիթս անձրեաց. կամ բազում
քան զմանրամաղ փոշիս՝ որք տարու-
բերին ընդ օդս համատարած. Եւ թէ
մեծ և ծանր իցէ չարիք քո քան զա-
մանայն լերինս՝ որ յերեսս երկրի. Եւ
թէ անօրէնութիւնդ քո բարձրացեալ
իցէ քան զերկինս, կամ խոնարհեալ գը-
տանիցի քան զանդունդս, և կամ լայնա-
ցեալ քան զոլորտս ծագաց երկրի, կամ
տարածեալ անդր քան զշրջանս եթե-
րական օթոց. Արդ՝ եթէ մեղք քո և
չարիք ըստ այսմ չափոյս իցէ որ աստ-
ցի, ի զղջանալդ քո՝ քան զթարթել ա-

չացդ, և քան զտուրեառութիւն շըն-
չոյդ, քան զարագութիւն նշուլից ա-
րեգական, և քան զերեւումն կայծա-
կան որ ի յօդդ, և քան զմտացդ ըն-
թացումն, առաւել ևս բիւրապատիկ
քան զարագութիւն սոցա քաւութիւն
շնորհեմ ամենայն բազմութեան մեղաց
քոց. քանզի ամենակարող արարիչ եմ.
և ոչ կարօտիմ ժամանակաց ի քաւու-
թիւն մեղաց: Եւ որպէս պղպջակ ջրոյ՝
ի յառնելն այնքան խստագին հողմոյ
մինչ զիզծաւս ի յարմատոց խլիցէ,
և զաշտարակս քակիցէ, որքան կարիցէ
զդէմ ունել. այսպէս և մեղք ամենայն
տիեզերաց ի զղջանալն իւրեանց, բիւ-
րապատիկ առաւել ոչ կարեն զդէմ
ունել իմոյ ամենակարող զօրութեանս:

34 Վ մեղաւոր՝ իմա՞ զի դու մարդ
ես չափաւոր. և մեղքդ քո թէպէտ

բազում թուին քեզ, սակայն և այն է չափաւոր ըստ նմանութեան քո. այսպէս իմաց, զի ես աստուած եմ անչափ; նմանապէս ըստ իմում անչափութեանս և ողորմութիւն իմ է անչափ: Արդ գույ յորժամ զչափաւոր մեղք քո՝ ի ձեռն խոստովանութեան ի մէջ իմ՝ անչափ ծովացեալ ողորմութեանս ձգիցես. այնպէս շիջանի գիւրաւ, որպէս փոքր մի կայծ առեալ ի մէջ համստարած ծովուն ձգիցես:

Արդ՝ որպէս ազգի ազգի են ճանապարհք մեղացն. նոյնպէս և զանազանք են գեղք ապաշխարութեան: Քանզի ոմանք իսորգով և մոխրով արդարացան. ոմանք լալով և արտասուօք զտէրն հաշտեցուցին. ոմանք միայն պահօք և աղօթիւք ապրեցան. ոմանք ողորմութեամբ զողորմութիւն գտին յինէն: Ոմանք մսրդասիրութեամբ՝ և տկարա-

գունիցն ծառայելով, ոմանք գետնախըշտութեամբ, ոմանք խոնարհութեամբ և հնազանդութեամբ թողութիւն մեղաց ընկալան:

Եւ դու ի սոցանէ առ զմինն ար հեշտ թուի քեզ և թեթե. և այնու կարող ես բժշկել զամենայն հիւանդութիւնս մեղաց քոց: Ոչ թուով ամաց և կամ բազում ժամանակաց, այլ միայն ուղղիղ դարձիւ և ճշմարիտ սրտիւ ի շարեացն հեռացեալ, կարող ես արդարանալ:

35 Ասն որոյ և դու փութան զի յառաջ քան զելն քո յաշխարհէ զինչ և կարողացիս՝ առաքեսցես յերիխոնս: Եթէ աղօթս հանդերձ արտասուօք, եթէ տքնութիւն մաքուր, եթէ սադմոներգութիւն ապաշխարանաց. եթէ ժուժկալութիւն հանդերձ խոնարհու-

թեամբ. եթէ հրաժարումն յերկրայ-
նոց իրացս. եթէ սէր անկեղծաւոր. ե-
թէ փափաքումն քրիստոսի. եթէ պահը
կամ ողորմութիւն։ Եթէ յառաջագոյն
ի սոցանէ առաքեսցես, վստահացի՞ր զի
ի հանգիստ ես գալոց և վայելելոց. ա-
պա թէ ոչ՝ երկիւղ կայ ի միջի։

36 ♪ այս ամենայն լսելով և իմանա-
լով՝ զինչ կամիք պատրաստել պատաս-
խանի աստուծոյ. յորժամ զաղերս ո-
ղոքանաց և զգութ անյիշաշարութեան
առաջի արկեալ, ամենայնի զինքն դնէ
պարտական պարտեաց մերոց. ի գութ
և ի գորով մտեալ՝ դարձեալ փարի ըլ-
մեօք՝ աղաքէ, պաղատէ, խնամարկէ,
խանգաղատի, պարգես խոստանայ-
որպէս հայր ի վերայ մեր աղէիսարշի։
Եւ առաւել քան զշարիմն անցուցա-
նէ զինամմն, որպէս ի սարտուցեալ

որդիսն է տեսանել. զի ի գիրկս առեալ
գգուեն, համբուրեն, զերեսն ի վերայ
դնեն, խանգաղատական ձայնիւ գորո-
վեն, զբարբառն եղանակեն, զծափս
հարկանեն. ամենայնիւ հնարին զհաշ-
տութիւն մանկանն, զի զլալն և զհե-
կեկալն խափանեսցեն։ Թէպէտ և նորա
խաղապտեալ զերեսն այսր անդր գար-
ձուցանեն, լեզուագարեն, զերեսն մագ-
լեն. սակայն և ոչինչ յայնցանէ ցասու-
ցանեն զձնողմն. այլեւ պարգես տան
մանկանն զախորժականս իւր, խաղա-
լիկս, անօթս պատուականս. եթէ բե-
կանէ՝ չցաւին. եթէ կորուսանէ՝ չտրտ-
մին. միայն թէ ի հաշտութիւն տեսա-
նիցեն զիջեալ զմանուկն։

Զայս և առաւել քան զսոյն ցուցա-
նեն մեզ գութք աստուածային խնամո-
ցըն. զորոյ և զփորձ առեալ հոգերգո-
ղին դաւթի զսաստիկ սիրոյն աստու-

ծոյ առ մարգիկ՝ ասէ. որպէս գթայ
հայր ի վերայ որդւոց իւրոց, գթայ և
տէր յերկիւղածս իւր:

37 **Ս**ա՝ ևս առաւել զանցափական
և զանեզբական սիրոյն իւրոյ զան-
պատմելի և զանիմանալի գրգանս՝ ին-
քրնապատում արարեալ ի ձեռն զու-
կաս աւետարանչին՝ աւանդէ մեզ ա-
սելով. Ո ի ձէնջ որդի՝ որ խնդրեսցէ ի
հօրէ իւրմէ հաց, մի թէ քար տացէ
նմա. կամ թէ խնդրեսցէ ձուկն, մի
թէ օձ տացէ նմա. իսկ եթէ դուք որ
չարգդ էք, գիտէք զպարգես բարիս
տալ որդւոց ձերոց. ՞րչափ առաւել
ևս հայրն ձեր երկնաւոր տացէ ձեզ
զանճառ և զանբաւ ուրախութիւնն:

38 **Տ**եսէք՝ որպիսի գեղեցիկ են պար-
գևը սիրոյ նորա առ իւր արարածս. ե-

թէ ախորժէք և դուք՝ լինիք որդիք
սիրոյ նորա, որ կայ հանապազ յոդո-
քել և ի թուել զգազանացեալ բնու-
թիւնս մարդկային։ Արդ՝ մի թէ քան
զվէմն ապառաժ իցեմք, որ գեղօք
քրբրեալ թուլանան, և սրով տաշին
ի պէտս գործոց։ Եւ եթէ երկաթ, և
զայն ևս հուր հալէ. և անօժս պի-
տանացուս ի ճարտարացն գործին։ Եւ
եթէ գազան, և այն ձեռընդել եղեալ՝
և հարկադրեալ պապանձեալ կան ի
գրունս թագաւորաց, առ ի պատրաստ
ի ճառայութիւն և ի հնագանդութիւն
նոցա։ Զարամուսթիւն վիշապաց՝ և
զցասկոտ բարս թիւնաւոր օձից ի հը-
նազանդութիւն ածեն բանք ողոքական
թովքի ճարտարի. և ընդելական ըն-
տանութեամբ առ միմեանս ճարակեն։

Եւ արդ՝ ասուն և խօսուն և իմա-
ցական բնութիւն մարդկան զիարդ ոչ

գէթ նմանի նոցա՝ թողուլ զանզգամու-
թիւնն և կեալ։ Եւ այն՝ զի պատգամք
սազմուերգողին կշուամբեալ յանդիմա-
նէ, և տարեալ մերձ առ օձսն և քար-
բը և կարիճս կացուցանէ ասելով։
Արտմութիւն նոցա լսու նմանութեան
օձի, որպէս իժի քարեի զի խցեալ է
զականջս իւր։ զի մի լուիցէ նա զձայն
թովչի ճարտարի, և մի առցէ զդել ի
դեղատուէ իմաստնոյ։

39 **Բ**այց դու ով մեղաւոր, նման-
եամ մարգարէին դաւթի։ որպէս ասէ
գիր, Մի թէ որ անկանիցի՝ ոչ յառնի-
ցէ։ որպէս և աստ անսաք՝ զի կատա-
րեաց մարգարէն։ Անկաւ ի ձեռն ցան-
կութեան, և յարեաւ ի ձեռն ապաշ-
խարութեան, աչօքն մեղաւ, շնաց և
սպան, լեզուաւն քաւեաց, զի խոս-
ովանեցաւ և ապահեցաւ։ Խոստավա-

նութիւնն թեթեացուցանէ զծանրու-
թիւն մեղաց։ Խոստովանութիւն զդէ-
զըս մեղաց հոսէ իբրև զփոշի։ Խոստո-
վանութիւնն զբարդս փշոց մեղաց
այրէ իբրև զհուր։ Խոնտովանութիւն
ուստի ելանէ՝ զանօթն ժանկակիր իբրև
զոսկի՝ պայծառագոյն գործէ։ և որ
անզեղջ մնասցէ՝ ոչ սրբեսցի։ Խոստո-
վանութիւնն է՝ որ նովաւ ապաշխարու-
թիւն գօրանայ. և առանց նորա որչափ
և գործի՝ տկարանայ յաւիտեան։ Խոս-
տովանութիւնն զզջման դուռն, ապաշ-
խարութեան սկիզբն, գլուխ արիու-
թեան առաքինութեան, զէն յաղթա-
զին. մեղաց վահան, Խոստովանութիւնն
ապաշխարութեան առիթ, ապաշխարե-
լոց պարիսպ, գլուրելոց կանգնումն,
գրդուեցելոց գաւագան, շլացելոցն
ցուպ։ Խոստովանութիւնն ապահու-
թեան, մեղաց սրբող, անմնքրից մաք-

րօղ. ի տանջանացն ազատող. գեհենի
ահուն փարատող. Խոստովանութիւն՝
երկնից բացող. առաջի տեսոն մուծա-
նող. ապաշխարողաց հաւաքող. մեղա-
ւորաց յապաշխարութիւն հրաւիրող.
մոլորելոց կոչող. ի քաղաքն երկնաւոր
առաջնորդող. Խոստովանութիւն՝ իրա-
ւարելոց լոյս. որք աչս ունին՝ ճառա-
գայթ. մանկանց դաստիարակ. ան-
յուսից օրինակ յուսոյ. Խոստովանու-
թիւն՝ եկեղեցւոյ զարդ. քահանայից
քարող. գործողաց պսակ. մանկանց ա-
ռագաստի զգեստ. և հարսանեաց մտին
բացօղ. Խոստովանութիւն՝ ի դրանց
մահու փրկող. աստուածային սեղանոյն
հրաւիրող. մարմնոյ տեսոն ջամբե-
ցող. պատուական արեանն արբուցա-
նող և տրտմեցելոց ուրախացուցա-
նող. Խոստովանութիւն՝ ապաշխարու-
թեան դուռն. յանցանաց քաւիչ. ըն-

դունողաց զնա մաքրիչ. թագաւորաց
պիտանի. աղքատաց ընդունելի. Խոս-
տովանութիւն՝ մեծամեծաց և տնան-
կաց պատսպարան. պոռնկաց քաւա-
րան. աւազակաց զաշտպանարան. Խո-
տովանութիւն՝ բանաւոր մեղուաց
հաւաքող. քաղցր գործոց վաստակող.
դառնութեան քալցրացուցանող. և
ամենայն առաքինութեանց զարդարող:
և արդ՝ որպէս կարացից գովիճ զիսու-
տովանութիւն. զի ուր յանցանք իցէ՝
աւանց սորա թէ քիւրապատիկ առա-
քինութիւնս գործեցին, ոչինչ օգտին.
եթէ պահես, եթէ աղօթես, եթէ ձրգ-
նիս, եթէ ողօրմութիւն առնես, եթէ
զամենայն առաքինութիւնս գործես,
չէ հնար քեզ աւանց սորա զյանցա-
նըս քաւել՝ և թաղութիւն գտանել:

40 Գիու ով մեղաւոր՝ որչափ կարու-
դութիւն է քո մարտիր ընդգէմսովո-
րական մեղացն քոց մեծաւ աղօթիւք.
և կոչեա քեզ ի բարեխօսութիւն ըզ-
դասս սրբոց հրեշտակաց և զամենայն
սուրբս և զարդարս, մանաւանդ բդ-
սուրբ աստուածածինն, ևո առաւել
գքրիստոսի սուրբ չարչարանսն, և աղա-
զակեա առ հայր անդադար՝ զի սղոր-
մեսցի քեզ. և ի ձեռն հոգւոյն սրբոց
տացէ քեզ կարողութիւն ընդգիմանալ
մեղացն :

Եւ եթէ պատօհածեսցի՝ զի յաղթիցիս
որպէս զմարդ տկար, դուի նոյն դար-
ձեալ կանգնեա. և որշափ անկանիս,
այնչափ արագապէս փութա կանգնիլ.
և աստուած այնպէս ընկալցի զքեզ,
իբրև թէ բնաւ չիցես անկեալ: Զի թէ
հանդերձ ինչ ի ցեխս անկանիցի աղտե-

դանայ. և յորժամ օճառօք մաքրի՝ ոչ
թուի խոտան յաջս զգեցողին. որ-
չափ ևս առաւել հոգին՝ որ անկեալ է ի
մեզ՝ և յառնէ անդրէն, խոտան ոչ
երեւեցի առաջի աստուծոյ. զի նա
կարի առաւել սիրէ զազգս մարդկան՝
քան այր ոք զհանդերձս իւր: Եւ տէս
զանչափ սէր նորտ՝ որ վասն մեր մարդա-
ցաւ, և մեռաւ մարմնով անմահն աս-
տուած. և ոչ թէ սիրէ միայն՝ այլն-
բառնայ ի վերայ ուսոց իւրոց ինդիա-
լով:

Արդ՝ որ ոք ունիցի ականջս լսելոյ
լուիցէ, և իմանայցէ, և վայելեացէ
ի բարութեանցն պարգեաց ի ձեռն
խոստովանութեան և ապաշխարու-
թեան, որ վառօք պսակէ, և ի գահայս
հանգուցանէ ի քրիստոս յիսուս ի տէր
մեր: Որում ընդ հօր և ընդ հոգւայն
սրբոյ վայելէ վառք իշխանութիւն և

պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից, ամէն:

Աղօթք ապաշխարութեան նորին սրբոյն Եփրեմի:

Sեր երկնի և երկրի յիսուս քրիս-
տոս իշխան կենաց և մահուց դա-
տաւոր կենդանեաց և մեռելոց, յոյս
և ապաւէն հոգւոյ իմոյ. քեզ մա-
տուցանեմ զերկրպագութիւնս և ըզ-
մազթանս ազօթից իմոց: Լուր ինձ
և քաւեան զմեզս իմ՝ որ միայնդ ես
առանց մեղաց, որ միայնդ ես սուրբ՝
և ի սուրբս հանգուցեալ. որ միայնդ
ես գթած և ողորմած: Ողորմեան ինձ
ստեղծիչ իմ և օրհնեան զիս. հաշ-
տեաց ընդ իս ապրեցուցիչ իմ; և մի-
շեան զիս որպէս զաւազակն յարքայու-

թեան քում: Դարձ առիս աստուած
փրկիչ իմ, և դարձո՞ զպրտմութիւնս
քո յինէն: Մի բարկութեամբ քով
խրատէր զիս, և մի պրտմութեամբ
քով յանդիմաներ:

Մի յաւիտեան բարկանար ինձ, և
մի յիշեր զչարիս իմ, և մի պարտա-
ւորիր զիս ըստ իմում անօրէնու-
թեանս: Մի ըստ մեղաց իմոց արասցես,
և մի ըստ անօրէնութեան իմում հա-
տուցես ինձ: Մի ընկենուր զիս յե-
րեսաց քոց, և մի դատապարտեր զիս.
զի ես ինձէն գիտեմ զի յանցաւոր եմ:
ի մանկութենէ իմմէ, և անպատա-
խանի եմ առաջի քո:

Այլ դու թագաւոր հզօր և անոխա-
կով՝ որ զյանցանս թողեր կնոջն մե-
ղաւորի, թող և ինձ զպարտիս մեզու-
ցեալ և անօրինեալ քո ծառայիս: Քան-
դի քո առատ բարելարութիւնդ յայն-

Ժամ երեխ, յորժամ ինձ ողորմիս՝
որ չեմ արժանի ողորմութեան քում։
յորժամ ինձ ցուցանես զգթութիւնդ
որ արժանի եմ բիւրոց տանջանաց։
զի զամենայն աւուրս իմ անցուցի ի
չարիս, և ոչ կացի ի հրամանի քում։

Արդ քաղզրացիր ինձ բարի և քաղ-
ցը թագաւոր, և հաշտեաց ընդ բազ-
մումելիս, և մի դարձուցանէր զերեսս
քո յինէն, և մի ինտորիր բարկու-
թեամբ ի ծառայէ քումմէ։ Մի անար-
գեր զիս և մի թողուր զիս աստուած
փրկիչ իմ։ զի թէպէտ ես զուաճար
հոգւյոյ սրբոյ ապակոնեցի անառակ
գնացիւք, այլ գու գժա յիս ստեղծիչ
իմ՝ ողորմոծ և անիշացոր, և մի տ-
պականեր զհոգի իմ յաւիտենական
այրմամբ ի գեհեան հրոյն։ Երկայնա-
միտ լեր առիս մարդասէր, և շնորհեան
ինձ ժամանակ ապաշխարութեան և

զլջումն արտասուաց, և զօրացն ըզ-
սիրտ իմ խորհիլ իմաստութեամբ զօ-
րէնս քո ի տուէ և ի գիշերի, գործել
զբարի՝ և առնել զարդարութիւն ա-
ռաջի քո։ Համբառնոմ առ քեզ զաշս իմ, և
բոլորով սրտիւ իմով կարդամ առ քեզ
տէր քրիստոս՝ միածին որդի աստու-
ծոյ, որ յալթեալ ի մարդասիրութենէ
քումմէ կամաւ խոնարհեցար յանձառ
փառացդ և առեր զծառայի կերպա-
րան, և չարչարանաց խաչի և մահու-
համբերեցեր վասն փրկութեան ստեղ-
ծուածոց քո։

Արդ որ այսպիսի սէր ունիս առ ազգս
մարդկան, և կամիս զի ամենայն մարդ-
կեցցէ և ի գիտութիւն ճշմարտութեան
եկեց, գթա և յիս ի բազմամելզմար-
դանը տէր, և կամեաց ընդ իմ փրր-
կութիւն, և արա ինձ ողորմութիւն, որ

առաւել եմ սղորմելի քան զամենայն
մարդիկ։ Զի ոչ սիրեցի զքեզ ի բոլոր
սրտէ իմմէ, և ոչ պահեցի զպատուի՝
բանա քո յամենայն զօրութենէ իմմէ։
այլ ունայնութեամբ անցուցի զաւուրս
իմ, և կատարեցի զկամս սրտի իմոյ։
Աւուրք իմ պակասեցան՝ և անօրէնու-
թիւնք իմ առաւելան, և ոչ գոյ ինձ
յայս փրկութեան՝ և տեղի ապաւինի
բաց ի քէն։ զի միայն ի քո բարերառու-
թիւնդ յուսացեալ եմ, և ի քո առատ
սղորմութիւնդ ապաւինեալ։

Եւ արդ բղխմամբ արտասուաց աղա-
չեմ զքեզ, մինչչեւ է ժամանակ դար-
ձի իմոյ հասեալ, և մինչչեւ եմ իսպառ
կորուսեալ, շնորհեան ինձ ապաշխարսու-
թիւն։ և յաւաջ քան զվախճանն իմ
արձակեան զիս ի կապանաց մեղաց իմոյ,
և անտես արա զամթիւ անօրէնութիւ-
նըս իմ։

Որ ամենայն բարութեանց ես տէր,
և իշխան ես թողուլ զմելս, ծածկեա
զամենայն յանցանս իմ քոյով բարե-
գրժութեամբ։ և մտիթարեան զվշտա-
ցեալ և զտարակուսեալ հոգի իմ։ և
առանորդեան ինձ յայսմհետէ ըստ կա-
մաց քոց քաղաքավարիլ գայլ ևս պան-
դրխութեան իմոյ ժամանակս։ և մի
թողուր զիս ի կամս անձին իմոյ, մինչև
տարեալ հանգուստես յօթեանս աբ-
քայութեանդ երկնից։

Կուր տէր աղօթից անարժան ծա-
ռայիս քո, և խոնարհեցօ զունկն քո ի
պաղատանս իմ, որ ասացեր՝ Հայցեցէք
և գտնիք, բախնցէք և բացցի ձեզ։ Եւ
այժմ բաց ինձ տէր զգուռն ողորմու-
թեան քո, որ ողբալով կարգամ առ
քեզ, և մի անտես առներ զաղաշանս
մեղուցեալ անձին իմոյ։ որ ոչ եկիր կո-
չնէ զարդարս, այլ զմեղաւորս յապաշ-

խարութիւն:

Եւ արդ խոնարհեալ անձամբ, բեկեալ սրտիւ, և ամօթալից երեսօք պաղատիմ անոխակալ տէրութեանդ քո. և յառաջ քան զդնիլ ատենին աղաչեմ, և նախ քան զփակիլ դրանն և հատանիլ անդարձ վճռոյն զարտառուս իմ արկանեմ առաջի քո՝ ողորմած տէր, քաղցր և անյիշաչար և երկայնամիտ առ արարածս քո:


Մի ընդ յիմար կուսանսն դատապարտեր զիս, փակելով զդուռն ողորմութեան քո. և մի ընդ չար և վատ ծառային առաքեր զիս ի խաւարն արտաքին, ուր լալ աչաց է և կրծել ատամանց, Մի յերժեր զիս ի գասուց սիրեաց քոց, և մի տարագիր առներ յերանաւէտ կենացն յաւիտենից, Մի անբաժին հաներ զիս ի հայրենի ժառանգութենէն, զոր պատրաստեալ եւ

իսկզբանէ աշխարհի սրբոց քոց. և մի զրկեր զիս յերկնաւոր հարսնարանէն:

Եւ վասն մեծ և փառաւորեալ թագաւորութեանդ քո՝ մի մտաներ ի գատաստան ընդ ծառայիս քո, և մի հատուցաներ ինձ ըստ բազում անօրէնութեան իմում: Այլ շնորհեած ինձ ընդ արժանաւորսն և ընդ կատարեալ հոգիսն աջակողմեան գասուն վերանալ լուսեղէն ամպօք ընդ առաջ քո յօդս. և ընդ սիրելիս և ընդ կամարաս քո ի յարազուարձ ուրախութիւնսն ուրախացո՛, և առատապարգև փառօքդ փառաւորեա զիս յերամն արդարոց, ընդ նոսին հանգուցանելով ի վերինդերուսաղէմ յարքայութեանդ քում յերկինս: Զի ընդ նոսին համաձայնեալ փառաւորեցից զքեզ ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեան յաւիտենից, ամէն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



2044



ՀՀ Ազգային գրադարան



NL0028843

1988